հանրային հեռախոսացանցի աշխատանքին կամ հեռախոսակապի ծառայություններից օգտվելու՝ ուրիշների հնարավորությանը:

- <Օպերատորի> քննարկմանն է ներկայացվել սույն պայմանագրով հեռախոսաֆիկացված տարածքի հանդեպ իրավունքներ ունեցող անձի հայտը՝ այդ տարացքում հեռախոսային գիծ տեղադրելու վերաբերյալ, եթե <Բաժանորդին> այդ իրավունքները չեն պատկանում:

3.3.6. <Բաժանորդից> պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ ▫Բաժանորդի▫ կողմից սույն պայմանագրի 2.4 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

4. ▫Բաժանորդի▫ պարտականությունները և իրավունքները

4.1. ▫Բաժանորդը▫ պարտավոր է՝

4.1.1 Մատուցված հեռախոսակապի ծառայությունների համար վճարումները կատարել լրիվ ծավալով, յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ, իսկ դեկտեմբեր ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4.1.2. <Օպերատորին> տեղեկացնել բաժանորդային սարքավորման տեսակի (ձևի) մասին և դրանք պահպանել սարքին վիճակում:

4.1.3 Զուգտակ սխեմայով հեռախոսակապից օգտվելիս նույն բաժանորդային գիծը օգտագործող ▫Բաժանորդի▫ համար չստեղծել բարդություններ:

4.1.4. Կապի որոշ ծառայություններից (VAS) օգտվելու դեպքում ծառայությունների օգտագործման հատուկ պայմանների մասին <Բաժանորդը> կարող է տեղեկացվել կապը սկսվելու պահին: Կապի շարունակելուն ուղղված <Բաժանորդի> հետագա գործողությունները համարվում են տվյալ պայմաններն ընդունելու՝ վերջինիս անվերապահ համաձայնություն: Ծառայությունների մատուցման պայմանների հետ համաձայն չլինելու դեպքում <Բաժանորդը> պետք է դադարեցնի կապը:

4.1.5. Պայմանագրում նշված հեռախոսաֆիկացված տարածքի նկատմամբ իրավունք ունեցող անձի (քաղաքացի կամ կազմակերպություն) փոփոխության, կամ բաժանորդի անվան, անձնագրային տվյալների, բնակության, գտնվելու վայրի և այլ փոփոխությունների դեպքերում գրավոր տեղյակ պահել <Օպերատորին> նման փոփոխությունները ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 30-օրյա ժամկետում՝ պայմանագիրը վերաձևակերպելու համար: <Բաժանորդ>-իրավաբանական անձը պարտավորվում է տեղեկացնել <Օպերատորին>՝ իր հանդեպ անվճարունակության վարույթ հարուցելու կամ իրավաբանական անձի կամավոր լուծարման մասին որոշում կայացնելու վերաբերյալ՝ նշված իրադարձության մասին հայտնի դառնալու օրվանից սկսած՝ 3 օրացուցային օրվա ընթացքում:

4.1.6. Վճարել մատուցված հեռախոսակապի ծառայությունների համար նաև այն դեպքում, երբ բաժանորդային (վերջնային) սարքավորումը օգտագործվել է այլ անձանց կողմից, անկախ այն բանից համաձայնեցվել է <Բաժանորդի> հետ, թե ոչ:

4.1.7. ISDN գծերով, CDMA հեռախոսագծերով մատուցվող ծառայություններից հրաժարվելու կամ <Օպերատորի> նախաձեռնությամբ հեռախոսակապի ծառայությունների մատուցման պայմանագրի դադարեցման դեպքերում սարքին վիճակում ետ վերադարձնել <Օպերատորի> սեփականությունը հանդիսացող ցանցային տերմինալ՝ NETMOD սարքավորումը (ները) CDMA համակարգով հեռախոսագծի բաժանորդային տերմինալը, անտենան կամ ▫Օպերատորի▫ սեփականություն հանդիսացող կապի այլ միջոցները:

4.1.8. Չփոխանցել սույն պայմանագրի 1-ին բաժնում նշված կապի միջոցները այլ անձանց (վարձակալության, ենթավարձակալության պայմանագրերով):

4.19. Կատարել ՀՀ օրենսդրության և սույն պայմանագրի պահանջները:

4.2 ▫Բաժանորդն▫ իրավունք ունի՝

4.2.1 Օգտվելու ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով հեռախոսակապի ծառայությունների ոլորտում սահմանված արտոնություններից:

4.2.2.ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պահանջելու հեռախոսակապի ծառայությունների վճարման վերահաշվարկ կամ այդ ծառայություններից հետագայում չօգտվելու դեպքում՝ վճարված դրամական միջոցների վերադարձ:

4.2.3 Ծառայությունների մատուցման ընթացքում <Օպերատորի> մեղքով առաջացած թերություններ հայտնաբերելիս պահանջել հեռախոսակապի ծառայությունների խախտումների անհատույց վերացում

4.2.4. <Բաժանորդն> ունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. <Օպերատորը> օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում <Բաժանորդի> հանդեպ պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու,